№ 4—ՔՍԱՆ ԵՒ ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինն է 10 ռուբլի.
վեց ամսուանը՝ 5 ռ., երեք ամսուանը՝ 3 ռ., ամիսը 1 ռ..
Առանձին համարների իւրաքանչիւրը 5 կոպէկ.
Խմբագրատունը բաց է ամեն օր բացի կիւրակէ և տօն օրերից առաւօտեան 11—2 ժամը կէսօրից յետ.

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի խմբագրութեան հետեւեալ հասցէով. Въ ред. газеты «Мегу Айастани», въ Тифлисъ, կամ Rédaction de «Meghou Haïastani» à Tiflis. (Caucase).

ՄԵՂՈՒ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 19 ՅՈՒՆՈՒԱՐԻ 1884

Խմբագրութեանս ուղղած թէ՛ յօդուածները և թէ՛ նամակները պէտք է պարզ գրուած լինին գրողի ստորագրութեամբ և հասցէով, խմբագրութիւնը կարող է փոփոխել, ուղղել և կրճատել յօդուածները. խմբագրութիւնը իւր վերայ չէ առնում յետ ուղարկել յօդուածները և պահում է երկու ամիս մինչև ցպահանջ.

Յայտարարութիւնների համար վճարում են ամեն մի բառին 2 կոպ. Յայտարարութիւնները ընդունվում են հայերէն և օտար լեզուներով. Յայտարարութիւններն ընդունվում են խմբագրատանը, «Կովկաս» հիւրանոցի տակ պ. Տէր-Յովսէփեանի ծխախոտի խանութում և պ. Շահվերդեանի պավիլիօնում.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

Արեւելեան խնդիրը.— Ս. Նշան եկեղեցու երեսփոխանի ընտրութեան մասին։
Ազգային. — Թղթակցութիւններ Բաքուից, Զարէքայ վանքից, Ս.-Պետերբուրգից և Վլադիկավկազից։
Քաղաքական. — Քաղաքական լուրեր։
Մանր լուրեր։
Խառն լուրեր։
Յայտարարութիւններ։
Ֆելիէտօն։

ԹԻՖԼԻՍ, 19 ՅՈՒՆՈՒԱՐԻ 1884 Թ.

—

Եւրոպական խաղաղութիւնը պահպանելու ձիգը նորա քաղաքագիտութեան գլխաւոր նպատակն է. բայց այդ նպատակին լիապէս հասնելու համար հարկաւոր է վերջնականապէս վճռել մի քանի հարցեր, որոնք միշտ խաղաղութեան խախտման առիթ կարող են տալ։ Այս հարցերից մէկն էլ է արեւելեան հարցը, որ վաղուց արդէն, ամեն մի քանի տասնեակ տարիների անցնելից յետ, իւր գլուխը վեր է քաշում և խանգարում Եւրոպայի խաղաղութիւնը։ Արդէն ներկայ դարումս նա երեք անգամ կրկնել է այդ, և այժմս էլ խլրտման մէջ է։ Յայտնի բան է այդ արեւելեան հարցը՝ Տաճկաստանի գոյութեան խնդիրը վաղուց վճռուած և վերջացած կը լինէր, եթէ եւրոպական մեծ տէրութեանց նախանձախնդրութիւնը չը լինէր։ Ռուսաստանն և մինչև իսկ Աւստրիան կամ այլ մեծ տէրութիւն հերիք էր միայնակ այդ հարցը վճռելու համար։

Ռուսաստանն այս դարումս երեք անգամ ձեռնհաս եղաւ այդ հարցը վճռելու, միայն եւրոպական տէրութեանց նախանձախնդրութիւնն արգելք եղաւ, որովհետև այդ նոցա շահերին վնաս էր և եւրոպական հաւասարակշռութեան վտանգ էր ըսպառնում, քաղաքագէտների տեսութեամբ։

Ուստի և Տաճկաստանի գոյութեան շարունակութիւնն անհրաժեշտ դարձաւ այդ հաւասարակշռութեան պահպանութեան համար. և որպիսի՛ զոհեր չը բերեց Եւրոպան այս գաղափարին, թէ՛ մարդկային արիւնով և թէ՛ դրամով։ Բայց հիւանդը գործ կատարել և դեր խաղալ չէր կարող. ուստի և սկսան մտածել այդ հիւանդի բժշկութեան վերայ—նորա համար դեղ և դարման համարեցին ներքին յեղափոխութիւնը՝ բարենորոգումները, թէ՛ մասնաւոր նահանգներում, թէ՛ ընդհանրապէս, թէ՛ օրէնսդրութեան և թէ՛ վարչութեան մէջ։ Ահա աւելի քան կէս դար է, որ այդ բարենորոգմունք լինում են Տաճկաստանում, սկսած սուլթան Մահմուդի ժամանակից. նա շարունակ ընդունում է դեղհատներ, բայց տկարութիւնը նոյնն է, և քանի գնում է կարծես աւելի և աւելի զօրանում է։ Ինչո՞ւ. որովհետև այդ դեղերը մեծ մասամբ տրւում են նրան, առանց նորա կազմուածքը լաւ զննելու և ըստ այնմ նորա հետ վարւելու։ Բարենորոգութիւնք մեծ մասամբ փոխ առած են եւրոպական տէրութեանց մէջ գործադրւող ձեւերից, առանց յարմարեցնելու տեղական հանգամանքներին և ժողովրդոց բնաւորութեան և զարգացման աստիճանին։ Տաճկաստանը դեռ եւս, ինչպէս հարկն է, ուսումնասիրած չէ։ Եւրոպայում ոչ միայն ազգերի, այլ և ամեն դասերի, մինչև իսկ իւրաքանչիւր արհեստաւորաց դասակարգի վիճակն ուսումնասիրւում և ըստ այնմ օրէնքներ են գրւում. իսկ Տաճկաստանում ամբողջ ազգեր և ժողովուրդներ, իրանց անցեալով, իրանց ներկայով դեռ անյայտութեան մէջ են և ահա սոցա համար օրէնքներ և կանոններ են ձեւում, որոնք բնականապէս կամ բնաւ հետեւանք չը պիտի ունենան և կամ շատ քիչ ազդեցութիւն ունենալով այն եզրակացութեան հասցնեն, թէ թուրքերը կամ այլք քաղաքակրթութեան ընդունակ չեն։ Առաջարկում է մէկը եւեմից բարեկարգութեան համար այս ինչ տէրութեան կարգը, միւսը գրաքննական օրէնքները մի այլ տէրութեան, երրորդը զինուորական կարգերը միւս տէրութեան, չորրորդն էլ իբրև միակ փրկութիւն Տաճկաստանի Աւստրիայի վարչական ձեւն և այլն։

Ազգերի և տէրութեանց կեանքի մէջ յեղափոխութիւնք տեղի են ունենում կամ բռնի միջոցով և կամ պատմական անցեալի և ներկայի քննութեանց վերայ հիմնւելով։

Եւրոպայում ոչ մի տէրութիւն Աւստրիայի կերպարանքը չէ կարող ունենալ, որ միայն նրան է յատուկ, որ ոչ թէ աշխարհակալութեամբ այնպէս ընդարձակւել է, այլ «Nube o felix Austria»-ով (ամուսնացիր ով բաղդաւոր Աւստրիա)։

Հաբսբուրգի տան ամուսնութեամբ ներկայ աւստրիական կայսրութեան մասերն, իրանց ազգերով, իրանց քաղաքական կարգերով միացել են մի իշխանութեան ներքոյ և պահպանել միշտ իրանց առանձնայատկութիւնքն, որոնք ազգայնութեան հարցի զօրանալով ներկայ դարուս մէջ աւելի կազդուրւեցան և կազմեցին ներկայ աւստրիական-դաշնակցական կայսրութիւնը։ Այս պատմական առանձնայատկութիւնք այնքան զօրեղ էին, որ ոչ անցեալ դա-

ՖԵԼԻԷՏՕՆ

Հրաշքի չեն հաւատում այժմ, ասում են հրաշք չը կայ և չէ կարող լինել, մինչդեռ անցեալ 1883 թուականի վերջերը և ներկայիս սկիզբները հրաշքով են լի, տեսնենք վերջերս ինչ կը լինի. Արդեօք այս չարագուշակ է, թէ բարեգուշակ է, տարին է նահանջ, նրանից շատ կայ պահանջ, երեւի այս հիման վերայ է և Բագուի թատրոնի կապալառուի մի գիշերւայ համար 200 ռուբլի վարձի պահանջ, որպէս զի հայ դերասանական խումբը յետս նահանջի, ներկայացումը չը յաջողի։

Հապա այսպիսի անհեթեթ պահանջները հրաշք չեն, Թիֆլիզում Արծրունու թատրոնը վարձ առնում է 80—100 ռուբլի, գուցէ և աւելի պակաս, ամենքըն էլ դժգոհ են, թէև տալիս են, բայց ասում են «մախլաս», այսինքն տուածներն ափսոս, ընթերցող, ունեզմնաս. բայց եկ ու այնուհետև Բագւում մի երեկոյի համար 200 ռուբլու պահանջը հրաշք մի համարիլ և մի զչարիլ, թէ մարդիկ ինչու կոյր են և իրանց չուրջ կատարւող հրաշքներին հաւատ ընծայում չեն։

—

Թիֆլիզից Բագու երկաթուղի շինվեցաւ, իբրև թէ երթևեկողներին յարմարութիւն և թեթևութիւն տվեցաւ, միայն պակաս գինն էլ վրան դրվեցաւ, այնպէս որ իսկապէս առաջվան երթևեկութեան ծախքն աւելի արժան երեւեցաւ, թէև աշխարհք սորա վերայ զարմացաւ և ամենուրեք դժգոհութիւնք յայտնի եղաւ, բայց երկաթուղու վարչութիւնն ամենքի վերայ էլ ծիծաղեցաւ և իւր աւելորդ շահից չը հրաժարվեցաւ, որովհետև արդէն փոստային կապակցութիւնն վերջացաւ, Բագու երթալ ու գալու համար այլ միջոց չ'երևեցաւ։

Երթևեկողն ինչ անէ, ճար չունէ, էլի պէտք է երկաթուղուն դիմէ և հրաշալի կերպով նորա գանձարանը հարստացնէ իւր գրպանը դարդակէ։ Օտար երկիրներում երկաթուղիք շինվում են, կապակցութիւնքը թեթևացնելու, արժանացնելու համար, ժողովրդի յարմարութեանց համար, կովկասում դորա հակառակն է լինում, երկաթուղով երթևեկութիւնն աւելի թանգ է նստում, և նա իւր յարմարութեան համար է շինվում, ժողովրդի յարմարութեան վերայ ուշք չէ դարձնվում. Եւրոպացու համար այսպիսի դէպքը զարմանալի չի լինել և նորա աչքում այդ երևոյթը հրաշք չի համարվիլ։

Թիֆլիզի ձիաթրեւլ երկաթուղու վարչութեան վարմունքն էլ պակաս չը գիտենաս, ընթերցող, եաղան սան, բաղան սան, քիմ դէիր քի եաղանսան, ինքն է գին որոշողն, ինքն էլ պահանջողը. ակամայ պիտի սորա կամքը կատարեն, եթէ կրակի գին փայէտոն նստել ուզում չեն, մանաւանդ տօն օրերին. վագոնները ցրտին, ձիան ու անձրևին բաց—տակդ էլ թաց, նիստ ու բերանդ արա խուփ ու բաց, հիւանդացար գնաց, շատ շատ կը դառնաս մուշտարի բժշկաց կամ երիցանց. Այսպիսի կեանքի յարմարութիւնը ներկայ յետնեալ դարումս հրաշք չէ՞։

—

Սրանից մի ամիս կամ աւելի առաջ ամեն եւրոպական լրագիրները հաղորդեցին, որ Սիկիլիայում մի երեւելի հարուստ կոմսի, բոլոր երկրին յայտնի անձնի աւազակները գերի տարան օր ցերեկով, իշխանութեան աչքի տակ, նորա արթուն հսկողութեան ժամանակ և մի քանի տասնեակ հազարներ առնելով ազգականներից, քառասնօրեայ ծանր ճգնութիւնից յետ ազատութիւն տուին կոմսին, բայց այդ աւազակները իսկապէս աւազակ չէին փափկասուն կոմսի համար, այլ ազատիչ հրեշտակներ էին նորա համար, որովհետև հոյակապ պալատներում ապրող, փափուկ և քնքուշ կեանք վարող կոմսին հիւանդ փախցրին և քառասնօրեայ խստակեաց կեանքով առողջացրին և բազմամեայ հիւանդութիւնից բուժած վերադարձրին, բայց մարդու համար, այն եւս հարուստի համար, ինչ աւելի թանգ բան կարող է լինել քան առողջութիւն, որ նրան միջոց կը տայ անելու չայլութիւն։

Հապա այս հրաշք չէ՞, ինչոր բազմահմուտ բժիշկները տարիների ընթացքում իրանց գիտութեամբ և փորձառութեամբ չը կարողացան գործել, աւազակներն իրանց աւազակութեամբ և կոպտութեամբ գլուխ բերին և այն քաղցրահամ ու համադամ խորտիկների վարժված և փափուկ անկողինների մէջ քուն վայելած կոմսին քաղցածութեամբ և խշտեակով քարի վերայ, խոնաւ քարանձաւում քնեցրին և առողջ ու զուարթ տուն դարձրին, թէև իրենց բժշկութեան համար մի փոքր վարձը մեծ պահանջեցին—և այսպէս մի նոր հրաշք գործեցին։

—

Այս դէպքի մասին լրագիրք շատ գրեցին ու մրոտեցին, աշխարհի համար այն զարմանալի ցոյց տուին, Սիկիլիան էլ աւազակութեան հրաշալի երկիր կարծեցին։

—

Մի պակաս հրաշք չը կատարվեցաւ և Վանայ մօտ Վարագայ վանքում՝ Հայրիկ Խրիմեանի այդ բանում. Այստեղ, ինչպէս «Մշակը» հաղորդեց, վարդապետ ձեռնադրվեցաւ Արսէն Թոխմախեան, այս բազմամեայ թափառական, շրջմոլիկ աստղիկը, որոյ մասին «Մշակն» ուրախացաւ, իսկ «Արձագանքը» շատ ցաւեցաւ, երեւի առաջինի աչքում նա հանճար է, իսկ երկրորդի աչքում յոյժ վնասակար է։ Առաջինը յոյս է տածում, որ նա իւր գաղափարներին իբրև վարդապետ էլ հաւատարիմ կը մնայ, իսկ երկրորդին նորա գաղափարը, երեւի, յոյժ ապարդիւն կ'երեւայ։ Բայց ամենամեծ ցաւն ըստ իս այն է, որ Հայրիկի սուրբ աջն Ա. Թոխմախեանին կը ձեռնադրէ և իւր սրբութիւնը կը նսեմացնէ. իբրև աշխարհական ճանապարհորդութիւնը ծանր է Թոխմախեանին, մինչդեռ այդ հեշտ կը լինի և արժան կը նստի վարդապետին, դեռ եւս պատիւ էլ կը տան և կը մօտենան աջին, և մանէթները առատութեամբ կ'երևին սորա միջին, Աստուած հաստատ պահէ հայոց ազգին, նորա միշտ սիրում ու յարգում են հրաշագործ դէրվիշներին, նման Եգեանին։

Բայց այստեղ հրաշքը ոչ «Մշակի» ուրախութիւնն է, ոչ «Արձագանքի» տրտմութիւնն է, ոչ Հայր Խրիմեանի անտեղի բարեսրտութիւնն է ոչ հայ ազգի խղճութիւնն և ոչ էլ իմ դժգոհութիւնն է. այլ այդ հրաշքը նոյն իսկ Թոխմախեանի մէջ տեղի ունեցած փոփոխութիւնը կամ լաւ է ասել քամելէոնութիւնն է, որ ամեն գոյն ընդունելու յատկութիւնն է, երեւի շահաստացութեան համար ներկայ աշխարհիս ոգւոյն հետևողութիւնն է։ Այդ ամեն քրզից զողացող Վիլհէլմ Տելլը մի դասախօսութեան մէջ հայ նահատակ ուսուցիչները հարստահարիչ, հայ գիւղացիները կողոպտող գող ու աւազակ անուանեց—ինքը 10 տարի նոյնը գործեց, ազգային գիւղացիների ուսուցիչ լինելով, երեւի իւր հասկացողութեան համեմատ և՛ ուսուցչութիւն անելով։ Հայ եկեղեցականութիւնը, մանաւանդ կուսակրօնութիւնն ազգի ցեց է, ազգի արիւն ծծող է, անշուշտ և վանքերն էլ այդ աւազակաց են—և ահա այդ աւազակայ բոյնն է այսօր մտնել բարեհաճում և նոցա շարքում իւր ապագայի համար տեղ ընտրում։ Եկ ու մի զարմանալ մարդոց այսպիսի հետևողութեան վարվելուն և հրաշք մի համարել նոցա այսպիսի գործողութիւնն՝ աչքակապութիւնը։

Աշխարհական ժամանակ Երևանում մի անշունչ թղթի վերայ, լրագրի թերթերի վերայ աւտօ-դա-ֆէ սարքեց—հանդիսապէս այրեց ու մոխիր դարձրեց—թուղթն այրելով նորա մէջ յայտնած գաղափարը ջնջել կարծեց, իւր խելքի պակասութիւնն ու սրտի դատարկութիւնը յայտնեց. երեւի այժմս էլ իբրև վարդապետ, աւելի ճիշդ է ասել անպետ, մարդոց վերայ աւտօ-դա-ֆէներ անել կը փորձէ, ըստ պահանջման շահին և կարգին կ'անիծէ ու կ'օրհնէ, անհաշիւ կը գործէ ու կը գործէ։ Աշխարհական ժամանակվան գործածին ինչ հաշիւ տեսանք, որ վարդապետութեան միջոցին գործածից բան յուսանք. Բայց Աստուած հաստատ պահէ մեր հրապարակախօսներին, այժմ տայ նոցա ռեկլամներին, կ'սկսեն գովել ու գովաբանել նոր Սահակի կամ Մեսրովբի գործերը, նորա ազնիւ գաղափարները, նորա ազգասէր ձգտումները, նորա հրաշալի քարոզները, նորա ջերմեռանդ Աստուածապաշտութիւնը, որ ծագել էր գուցէ կրօնական կատարեալ անտարբերութիւնից, կամ ապրուստ վաստակելու անհնարհութիւնից, ձրի ապրելու սովորութիւնից։

Կը հոլովին տարիներ, կը մոռացվին յանցանքներ, կը մոլորվին մարդիկներ, երևան կը գան նոր կեղծ Հայրիկներ, կ'ուրախանան հայեր, մէջտեղում դեր խաղացողները կը լինեն յաջողակ ձեռնածուներ ու ջամբազներ, որոնք կը պաշտվին իբրև սրբեր—մեր ապագայ կաթուղիկոսացուներ. կեցցէ նոր ժամանակը—և սորա ոգւոյն հետեւող ու առաջնորդող «Մշակը»։

Այսպիսի իրողութիւնք տեսնելով ինչպէս չասես, թէ հրաշից ու հրէշից ժամանակ է ներկայն—զարմանալի է թէ ինչ կը լինի դորա ապագայն, եթէ աւելի հեռատես և խորհուն չի լինիլ Հայն։

Քուչուկ.

րի վերջերում ապրող ամենահամակրելի յեղափոխիչ Յովսէփ II կայսրը կարող եղաւ ջնջել և ոչ Մետերնիխի և այլ քաղաքագէտների ջանքն ու խելքը: Յովսէփի երկրորդ կայսրն, այդ մարդասէր անձն, որ առաջ քան կայսր լինելն, իրան մարդ ծնած էր համարում և ամեն մարդոց վիճակին կարեկից և իւր հպատակների ստորին դասակարգի բարերարն էր, հէնց իւր բարերարեալներից ընդդիմութիւն գտաւ, երբ աւստրիական երկիրներում կենդրոնականութիւն հաստատելու համար, նոցա պատմական առանձնայատկութեանց ձեռնամուխ լինել ձգտեց: Իսկ տաճկական կայսրութիւնը կազմել է զէնու զօրութեամբ, բուռըն աշխարհակալութեամբ, նորա իւրաքանչիւր քայլը ներկած է արիւնով: Նորա մէջ բնակվող շատ ազգութեանց և ժողովրդոց և ոչ իսկ պատմական անցեալը յայտնի է: Նոքա մեծ մասամբ խառն ապրում են առանց իւրաքանչիւր նահանգին մի առանձնայատկութիւն սեպհականելու: Այստեղ աւստրիական կարգըն անիրագործելի է:

Տաճկաստանի համար մեր համեստ կարծիքով ամենամեծ յեղափոխութիւնը պիտի լինի եւրոպական գիտութիւն և արհեստ տարածելն առաջ քան եւրոպական օրէնքներ և կանոններ մտցնելը, որոնք հասկանալու համար նախապատրաստութիւն չը կայ:

Օրէնքի առաջ հաւասարութեան գաղափարը հասկանալի չէ ոչ միայն վայրենի քրդին ու թիւրքմէնին, այլ և այդ օրէնքն ի պաշտօնէ գործադրել պարտաւորվող նոյն իսկ տաճիկ էֆէնդիի իբրև մահմէդականի համար, քրիստոնէի վերաբերութեամբ: Այս պատճառով էլ ամեն բարի օրէնքները ու կարգադրութիւնները կը մնան մեռած տառ թղթի վրայ, ընդդէմ ամեն աշխատանաց, մինչև որ դրանք ըմբռնելու և զգալու կարողութիւնը չի լինիլ: Բացառութիւն կազմում են այն նահանգներն, որոնց բնակիչները քրիստոնեայ լինելով և փոքր ինչ Եւրոպայի քաղաքակրթութեան մասնակցած, ընդունակ են բարենորոգմանց նշանակութիւնը հասկանալու և նրանից օգուտ քաղելու:

Եթէ Եւրոպայի ձգանց և ահագին դրամական զոհողութեանց կէսը գործադրված լինէր Տաճկաստանում ազգային կրթութեան վերայ, այսօր Տաճկաստանն ինքը կը ձգտէր հիմնաւորապէս բարեկարգվելու իւր մէջ և կարիք չէր լինիլ եւրոպական տէրութեանց բռնի պատուաստելու նորա վերայ զանազան բարենորոգութիւնք:

Տաճկաստանը կրթութեամբ պիտի հասնի ինքնաբարեկարգութեան Եւրոպայի օգնութեամբ, եթէ սա ժլրաւի ցանկանում է, որ Տաճկաստանն ապրի իբրև եւրոպական տէրութիւն, սորա հաւասարակշռութիւնը պահպանելու համար և ոչ իբրև խրտուիլակ շարունակէ իւր գոյութիւնը:

Ամսոյս 22-ին ս. Նշան եկեղեցւոյ ժողովրդականք կրկին հրաւիրվում են եկեղեցի, ս. պատարագից յետ երեսփոխան ընտրելու համար: Հաշիւն էլ մոռացել ենք, թէ այս քանիերորդ անգամն է կրկնվում այդ հրաւէրը: Չը գիտենք, թէ ս. Նշանը ծուխ չունի, թէ ժողովրդականք այնքան անտարբեր են և խուլ իրանց եկեղեցւոյ շահերին, որ արժան անգամ չենհամարում այդքան անգամ հրաւէրին արձագանք տալու: Եթէ այդ դժբաղդ եկեղեցւոյ ժողովրդականք անկարող են իրանց միջից Աստուծոյ տաճարին ծառայելու մէկ արժանաւոր անձն գտնելու, թող հաւաքվին և բարեհաճին հէնց այդ միտքը յայտնելու եկեղեցական իշխանութեան, որ անշուշտ կը գտնէ Թիֆլիսի մէջ մի եկեղեցական կամ աշխարհական, որ այդ պաշտօնը ստանձնէ և տաճարի շահերին և արդեանց խնամք տանէ, բայց յայտնի բան է այն ժամանակ ս. Նշանի ժողովրդականք ոչ հաշիւ պահանջելու իրաւունքը պիտի ունենան և ոչ էլ տրտնջելու, թէ եկեղեցական արդիւնքները քիչ են և անկանոն կերպով են տնօրինվում: Երբ որ մի մարդ իւր պարտքերը ճանաչել չը գիտէ, նա և իրաւունքներ վայելելու արտօնութեան արժանի չէ: Մի՞թէ այս պատիւ է ս. Նշան եկեղեցւոյ ծխականներին, որոնց մէջ, ինչպէս մեզ յայտնի է, կան և՛ հարուստներ և՛ կրթուած անձինք, որոնք պարտական էին պարտաճանաչ լինել և յարգել իրանց մօր՝ եկեղեցու շահերն ու իրանց պատիւը:

ԱԶԳԱՅԻՆ

Վանից «Մշակին» հաղորդում են, որ այնտեղի անգլիական հիւպատոս պ. Էվրզը, ի պատիւ Խրիմեան Հայրիկի ճաշ է տուել, հրաւիրելով և քաղաքի նշանաւոր հայերից էլ ոմանց: Այս հացկերոյթի ժամանակ պ. Էվրզը հաւաստիացնում է Հայրիկին և ներկայ եղողներին, որ Թագուհու կառավարութիւնն երբէք անուշադիր թողած չէ տաճկահայերին, այլ միշտ պատեհ առթի է սպասում Բ. Դրան առաջ միջնորդելու նորանց համար: Լօրդ-Դիւֆֆէրին այնպիսի անձնաւորութիւն է, որ անհնարին է թէ չը յաջողեցնէ գործը, միայն հարկաւոր է ըսպասել: Սրբազան Հայրիկն իրան յատուկ ճարտարութեամբ պատասխանելով տաճկահայերի անկեղծ երախտագիտութիւնն է յայտնում դէպի անգլիական ազգն ու կառավարութիւնը:

«Մեղուն» միշտ վստահութիւն յայտնած է դէպի մեծ տէրութեանց խոստումն, մանաւանդ դէպի Անգլիան, ուր ժողովրդի կողմից այնպիսի ցոյցեր եղան յօգուտ տաճկահայոց, որպիսիք ոչ մի եւրոպական ազգի կողմից չ'եղան: Բայց յայտնի է, որ հասարակաց կարծիքն որպիսի ազդու ներգործութիւն ունի Անգլիայի կառավարութեան վերայ: Մենք միայն կը ցանկայինք, որ մեր տաճկահպատակ եղբարք աւելի համբերող լինէին և անտեղի ցոյցեր ու աննպաստ արտայայտութիւնք չ'անէին, որոնք միայն աւելի կասկած են յարուցանում և գործը յետաձգում:

Մենք սովոր ենք միշտ դեռ ևս տեղի չ'ունեցած երևոյթի հետևանքները գուշակել, այն ևս չափազանցօրէն, որ միշտ վնասում է իսկապէս գործին, որ չէ կարող երբէք բնականից դուրս ընթացք ունենալ: Հարկաւոր է միշտ չափաւոր լինել երբէք յափշտակվող:

ԲԱԳՈՒ

Քաղաքակիրթ ազգերի պատմութեան մէջ տեսնուած չէ երբէք, որ գրականութիւնը և անձնականութիւնը, մամուլը ու շահասիրութիւնը երբ և իցէ համերաշխութեամբ ձեռն ձեռի տուած յառաջ ընթանան յօգուտ հասարակական շահերի: Գրականութիւնը ու մամուլը մի տաճար է, ուր պիտի ներս մտնել ամենայն երկիւղածութեամբ:

Ով որ առանց յարգելի հասարակական նպատակի միմիայն հասարակութեան ու նորան առաջնորդողների պատիւը շոշափելու նպատակով է մտնում այդ տաճարը, այնպիսին դատապարտելի է: Այս տխուր խորհրդածութեանը մեզ տեղիք տուաւ գրելու «Մշակի» անցեալ տարւոյ 193 համարում, մի անդր-վարագուրեան դիրք ընդունած թղթակցի նամակը Բագուից, ուր մի քանի անկապ նախադասութիւններով, սուտ ու սխալ տեղեկութիւններով կամեցել է ցոյց տալ Բագուայ երեսփոխանական ընտրութեան ապօրինութիւնը Շամախւոյ թեմից ուղարկած շրջաբերականի յօդուածների նկատմամբ:

Յայտնի է ամենքիս, որ «պօլօժէնիան» իրաւունք է տալիս քաղաքիս հայ հասարակութեան իւրաքանչիւր ծխի երեսփոխանաց ընտրութեանը մասնակցել, և եթէ ամեն մի ծուխ ի գործ չի դնել իւր այս իրաւունքը, դա ընտրուած մարմինների վարկը չի կարող երբէք նսեմացնել: Ասացէք խնդրեմ, ով է յանցաւոր, որ բացակայ խեղճերը իրանց ձեռքը տուած զօրութիւնը դանդաղեցան գործ դնելու. ով է մեղաւոր, որ այդ quasi-խեղճերը մեր համայն ազգին վերաբերող այսպիսի կենսական մի խնդրոյ առթիւ, որպէս երեսփոխանաց ընտրութիւնն է, չը շարժուեցան իրանց տեղերից. մինթէ գեր. հայր Ճերմակեանի այդ խնդրոյ առթիւ խօսած իմաստալից ու խորիմաստ քարոզները եկեղեցւոյ ամբիոնից և արժ. Խորէն քահ. Միրզաբէկեանցի յորդորանքները նոյեմբերի 19-ից մինչև դեկտեմբերի 1-ը, այսինքն մինչև ընտրութեան օրը, թէ դրսում և թէ երկու եկեղեցիներում, չը ներգործեցին նոցա սրտի և հոգու վերայ և, վերջապէս, մինթէ տեղական ռուս լրագրի մէջ տպած ծանուցումը և առանձին քաղաքի մէջ ցրած յայտարարութիւնները ևս չը կարողացան դրդել այդ մարդկանց: Այդպիսիները (բարեբաղդաբար դոցա թիւը, ինչպէս երևաց վերջում, երեսփոխանական ընտրութեանը ներկայ եղող հայ հասարակութեան մի աննշան % էր կազմում) և նոյն իսկ թղթակիցը ինչ երեսով իրաւունք կ'ունենան քննադատելու, երբ ընտրելի հասարակութիւնը նոցա հաճոյքը յարմար որոշումներ չէ արել: Եթէ մէկը կը համարձակւի ասել թէ՝ ժողովրդեան իրաւունքները կը բռնաբարուին, պէտք է նախ խոստովանի թէ՝ ինքը ժողովուրդը չը գիտէ իւր տարրական իրաւունքը լիօրէն ի գործ դնել:

Գալով երեսփոխանական ընտրութեան այս կամ այն եղանակին — ընտրել առաջուց երկուսին, կամ ընտրել վեցը և այդ վեցից էլ երկուսին, նրանից, որոնք շատ քուէ են ստանում — ոչինչ մի էական տարբերութիւն ես չեմ նշմարում, ինչպէս այդ նշմարում է պ. յօդուածագիրը իւր խոշորացոյցով. բաւական է միայն, որ մօտ 200-ի չափ հայ-ընտէլլիգէնտ հասարակութիւն կար ընտրութեան օրը դահլիճում և ամենքն էլ լիօրէն ու գիտակցաբար վերաբերուեցան այդ խնդրին. երեսփոխանները արժանի կամ անարժան են իրանց պաշտօնին, դա բոլորովին ներկայ գտնուած հասարակականի բանն է. դա ընդունելի է հասարակութեանը, քանի որ նա է նոցա ընտրել: Մենք նոցա օրինաւոր մարմին չենք կարող չընդունել և ոչ մէկին էլ իրաւունք կը տանք հասարակութեան գիտակցութեամբ ընտրուած և մեզ յոյժ փափաքելի եղած երեսփոխանների ընտրութիւնը անվաւեր հրատարակելու:

Գուցէ թղթակիցը պատճառներ ունի չ'ընդունելու ընտրութեան այս կերպ եղանակը, այս կերպ տուած քուէն. գուցէ նա հասարակութեան զարգացեալ դասի տուած քուէն անվաւեր ճանաչելով plebiscite է առաջարկում. բայց կարող է նա արդեօք պատմական փաստերով ապացուցանել դորա օրինականութիւնը. կարող է արդեօք այս մասնակցութիւնը ընդհանուր ժողովրդական անելու համար աւելի գործնական և աւելի տրամաբանական միջոց ցոյց տալ: Շատ սխալվում է թղթակիցը, եթէ կարծում է, որ պլեբէսների ընտրութիւնը կանոնաւոր ընտրութիւն է լինում: Եթէ թղթակիցը փափագում է ունենալ արժանաւոր երեսփոխաններ, չը պիտի վստահանայ նա մանաւանդ հայոց պլեբէսի վրայ:

Եթէ թղթակիցը փոքր ի շատէ ծանօթ լինէր շատ աւելի քաղաքակրթուած ազգերի պատմութեան հետ, նոյն իսկ Ֆրանսիայի նորագոյն պատմութեան հետ, կը տեսնէր թէ պլեբէսները ինչ անյաջող արդիւնքներ են ցոյց տալիս: Այդ տեսակ փափուկ խնդիրների մէջ ժողովրդի կրթեալ, զարգացեալ դասի կարծիքը պէտք է ընդունել և ոչ ամբոխի. իսկ մի այդ տեսակ կրթեալ և զարգացեալ հասարակութեան բուռն բազմութիւն կազմում է երեսփոխանական ընտրութեան ժողովը դեկտեմբերի 1-ին Մարդասիրական ընկերութեան ընդարձակ դահլիճում ընդ նախագահութեամբ գեր. հայր Ճերմակեանի, բացառութեամբ մի քանի պարոնների, որոնք պայմանների ուրիշ կերպ դասաւորութիւնից ոչ մասնակցել են այդ տեսակ փափուկ խնդիրների և ոչ էլ կը մասնակցեն: Դոցա մասնակցութիւնը գուցէ աւելի վիճմանց ու կողմնակցութեանց արձակ ասպարէզ բանար, քան սպասողութիւն ընծայէր խնդրի անաչառութեամբ լուծուելուն. այդպիսիները աւելի ընդունակ կը լինին անհատական ցանկութիւնների, անձնասիրական միտումների յայտարար լինել, քան թէ ընդհանուրի ցանկութեանց ու ձգտումների. այդ մարմինների մէջ, որոնք բարոյական առընչութիւն չունին լուծւող խնդիրների հետ, իսկ ունեցած առընչութիւնը աւելի տեսիլ է, քան իրողութիւնը, — առաւել հաւանական է տեսնել այս կամ այն իշխանական ձգտումները, քան թէ բուն հասարակութեան էական շահերը, որոնք պահանջում են պարտաճանաչութիւն ու պատասխանատուութիւն: Այս տեսակէտից նայելով հարցի վերայ, այս ընտրութեան մէջ տեսնում եմ ես կատարեալ անաչառութիւն և անկողմնապահութիւն: Սակայն մենք դորանով չենք ուզում ներկայացնել այստեղ երեսփոխանական ընտրութեան բոլոր կատարելութիւնները, բայց երբ կը տեսնենք մարդիկ, որ իրանց կիրքը յագեցնելու համար զրպարտութիւն կը հնարեն ժողովի դէմ և հետևապէս կը ներկայացնեն քաղաքի ընտիր հայ հասարակութեան ներկայացուցիչներին, իբրև անկարող անհատներ, կարիք անգամ չենք տեսնել այդ նախատանքների դէմ բողոքելու, այլ կը մխիթարուինք միայն նորանով, որ այդ տեսակ գրողները մեզ ամենքին ծանօթ դասի կը պատկանին, որոնք իրանց կոչման մէջ կը կրեն արդէն իրենց դատապարտութիւնը: Եթէ մենք փոքր ի շատէ քաղաքական հասունութիւն ունենայինք և ըմբռնած ներկայ դարուս քաղաքականութեան սրոգայթները, ընտրութեան եղանակին և quasi—զեղծումներին ուշք չէինք դարձնի, մի այլ կողմից, որչափ մեր ընտրութիւնը մաթեմատիքական հաւասարութիւն ու ճշգրտութիւն ունենար, որքան մեր երեսփոխանական ընտրութեան եղանակը գաղափարական աւելի մեծ կատարելութիւն ունենար, այնուամենայնիւ մենք ընտրուած երեսփոխաններից (պ. Գիլլարեանցից և Ս. Վարշամեանցից) աւելի արժանաւորը կը դժուարանայինք գտնել Բագուայ մէջ: Այդ այն երեսփոխաններն են, որոնք տասնեակ տարիներ անխոնջ աշխատել են հասարակական, ընկերական և ուսումնարանական խնդիրների մէջ յանուն մարդասէր ընկերութեան վսեմ գաղափարի. դոքա այն անձնաւորութիւններն են, որոնք ունին այն հաստատ համոզմունքը և հաստատակամութիւնը, այն ուղղութիւնը, որ պիտի առաջնորդէ նոցա մօտ ապագայում, դոքա վերջապէս այն մարդասիրական ընկերութեան անդամներն են, որոնք՝ հեռու արտաքին փառասիրութիւնից աշխատում են և պիտի աշխատեն հասարակական և ընկերական գործերում: Յիրաւի. նոքա ինքնասէր են և պատուասէր. բայց ինքնասէր են ու պատուասէր այս բառի ամենաազնիւ և ամենավսեմ մտքով, որ աւելի բարութեան մայր է, քան թէ բարոյական ոչնչութեան ու փոքրոգութեան յայտաբար: Նոքա մեծ են առանց պատուաւոր մակդիրների, նոքա մեծ են քաղաքիս հայ հասարակութեան սիրով, համակրութեամբ ու գնահատութեամբ:

***

ԶԱՐԷՔԱՅ ՎԱՆՔ.

10 յունուարի 1884 թ.

Թեմական վերատեսուչ պ. Այգըեանը «Արձագանքի» 49 №-ում «Մի պատասխան» է նուիրում մեզ, որը մի սիրուն հայելի է տեսնելու համար պարոնի սրտի և հոգու գեղեցիկ յատկութիւնները:

Բանակռիւը երկաթաքարի առիթով է ծագել: Գ. Այգըեանը առանց իրական փաստերի հաւատացնում է՝ թէ կայ երկաթի քարի հանք Զարէքայ վանքի կալուածքում և նորա արդիւնքը գաղտնի եմ պահում. իսկ ես պատասխանում եմ, որ չէ եղած և այժմէլ չը կայ. և նա ինքն զարմանալի յամառութեամբ պնդում է, որ կայ, և հրաւիրում է իմ հակառակորդներին, որ նրանք ապացուցանեն երկաթաքարի գոյութիւնը: Չ'եղածն ապացուցանել աշխատել — դա ջուր ծեծել է, որ շատ սիրում է, երևի, պ. Այգըեանը, իւր անարդարութիւնը ծածկելու համար:

Արդէն ապացուցած է, որ իւր արժամերից բարձր պաշտօն ստանձնելը մարդոց վրայ սովորաբար վատ է ներգործում, նոքա աւելի անձնապաստան են դառնում: Պարոն Աղայեանցը կարծես իւր իրաւանց սահմանը չէ ճանաչում. նա եթէ մեր դէմը ինչ ինչ ասելիքներ ունի, թող բարեհաճէր օրինական ճանապարհով վարուելու և ո՛չ թէ խրոխտար մեզ վերայ, իսկ եթէ նա այդ բանը չէ հասկանում մեզ ի՛նչ. մենք մեր իրաւունքից և օրինաւոր պատասխանատուութենից երբէք չենք շեղուած, թէ մենք ինչո՞ւ փիբի ուսումնարանին ամեն տարի հարիւր մանէթ չենք վճարում, պարոնը թո՛ղ անդիկանայ հոգևոր իշխանութիւնից, որին իւր ժամանակին յայտարարած ենք, մենք պարտական չենք ամեն պարոնի գրագրութեան պատասխանել վանքի վերաբերեալ նիւթին գործերի մասին:

Զարմանալի է պ. Աղայեանցի սուտախօսութիւնը: Նա ասում է, որ մեր վանքը այնքան եկամուտ ունի, որ կարող է մի քանի գիւղական ուսումնարաններ պահել ի հարկէ ծախքեր հանած, և այս բանը նա մի առ մի որպէս թէ ստուգել է: Պարո՛ն, դատարկ խօսելով մի՛ մոլորացնէք ընթերցողին, դուք բարի եղէք մեր վանքի տարեկան եկամուտի ցուցակը մանրամասնաբար հրատարակել և ապացուցանել երկաթագրի գրութիւնը. այն ժամանակը մենք ո՛չ թէ աչեղ դատաստանը, այլ և հասարակաց առողջ դատապարտութիւնք սիրով կ'ընդունենք. այն ժամանակ առուր քո և պարանոց իմ... իսկ հակառակ դէպքում դուք ի՞նչ կ'առնէք, ո՞ր դատաստանը կ'ընդունէք, կը թոյլատրէի՞ք արդեօք, որ մենք թանաքոտ գրիչը մի անգամ քսէինք մեր հակառակորդի ճակաինշան իրա պարզերեսութեան:

Սրանից յետոյ մենք խնդրում ենք նոյնպէս պ. Աղայեանցից, որ ապացուցանի թէ ե՞րբ, ինչո՞ւ համար, ո՞րտեղ և ի՞նչպէս մենք սրբութեամբ ու առաքինութեամբ չենք գրաւել ժողովուրդի համակրութիւնը. ինչո՞ւ համար և ի՞նչպէս բապասնալիքներով ճնշել ենք ամենքին, որով և երկիւղ ենք յարուցել նրանց մէջ. այս զրպարտութեան համար ի՞նչ փաստեր ունի պարոնը: Ճշմարիտ մենք չենք հասկանում թէ ի՞նչպէս կարելի է այսպիսի մի անձնաւորութեան հաստատութեանց դէկ ձեռքը տալ:

Մենք ինչպէս պաշտօնական գրագրութեան նոյնպէս և առօրեկլնիւթեր գրելում վարժ ենք: Պարոն Աղայեանցը, հակառակ իւր ցանկութեան, տպագրական խօսքով և չի կարող մեր հախիցը գալ: Տպագրական խօսքը ծանր է միայն այն մարդկանց համար, որոնք անարժան են իրանց պաշտօնի մէջ, որոնք խաբեբայ սոսխօսներն են: Մի բան էլ ինձ զարմացնում է. պ. Աղայեանցը միշտ ապառնի ժամանակով է խօսում թերեւս երկիւղ տալու համար — ցոյց կը տամ, ցոյց կը տամ, կ'առնեմ, պարապ չեմ մնալ թոյլ չեմ տալ, կ'ապացուցանեմ... դէհ արա՛ էլի, որ օրին ես սպասում: Իսկ պարոնի անխարկած հայհոյանք ու վարձկան մարդիկ ո՞վքեր են, որոնք սուտ սուտ դովել են: Չէ որ պարո՛ն, եթէ դուք ձեր հայեացքով ճիշդ նայէք ձեզ վերայ, կը տեսնէք, որ ձեր անխարկածը միայն դուք էք:

Մենք դարձեալ կրկնում ենք, որ ոչ մի բարբաջմունք կարող չէ շեղել մեզ այն գործնական ընթացքից, որ բռնած ենք մինչև այսօր մեր վանքի կալուածոց պահպանութեան վերաբերութեամբ: Մենք գործել ենք և պէտք է գործենք: Իսկ մեր վանքի արդիւնաց քանակութեան հետ ծանօթանալու ցանկացողներին յայտնում ենք, որ ոչինչ գաղտնիք չ'ունինք, մեր եկամուտը միմիայն վանքի կալուածներիցն է բաղացուում. և այս մասին հրաւիրում ենք ամեն պարոնի հրապարակ գալու և խօսել մեր մասին: Դիմակի տակ մնացած անկիւններում բամբասելը ամօթալութիւն է. մենք հաւատարայէս դոհ կը լինենք լաւ և վատ խօսողներին էլ, եթէ միայն նրանք հրապարակի գլխեն աղամարդի պէս, մենք աղնիւ բանակռուից չենք փախչիլ եթէ միայն խօսողը աղնիւ լինէր և աղնուաբար վարուէր:

Առ այժմ մնամ։

Վանահայր Զարէքայ վանից՝

Աստուած. վ. Տէր-Յարութիւնեանց

Մ.-ՊԵՏԵՐԲՈՐԳ.

29 Նոյեմբերի 1883 թ.

Խնդրում ենք տպել հետեւալ մի քանի տողերը.— Պետերբուրգի հայ ուսանողական ժողովը այս տարի մտնում է իւր քսամեայ տարեդարձը և ցաւօք սրտի տեսնում է, որ իւր նիւթաւոր միջոցները չեն կարող բաւականացնել ուսանողների ամենակարեւոր պիտոյքներին, մինչեւ նրանց թիւը աճում է, իսկ պէտքերը շատանում: Այս պատճառաւ նա ստիպուած է դիմել հայոց ժողովրդի մշտական առատաձեռն բարեգործութեանը, որի օգնութեամբ միայն կարող է նա շարունակել իւր համեստ գործունէութիւնը: Նուէրներով խնդրում ենք դիմել հետեւեալ հասցէով.— Григорію Ѳаддеевичу Тигранову. Колокольная улица, д. № 15, кв. 7.

Մ.-Պետերբուրգի հայ ուսանողական ժողովի վարչութեան անդամները՝

Մ. Ալիքեկեան, Գրիգոր Տիգրանեան. Պ. Քալանթարեան, Կ. Եաղուբեան, Մելիք-Ադամեան.

ՅԱՐԳՈՅ ԽՄԲԱԳԻՐ.

Ճանապարհորդութեանս միջոցին առիթ ունեցայ մի օր մնալ ի Վլադիկաւկազ. ըստ սովորութեանս ցանկացայ այցելութիւն անել այնտեղի հայոց երկսեռ ուսումնարանները: Ճշմարիտ ասած, երբ այցելեցի՝ զարմացայ նոցա բարեկարգ, մաքուր և ըստ ամենայնի կանոնաւոր դրութեան մէջ գտնելուս, նա մանաւանդ տղայոց դպրոցը, որ ես ի 1876 ամեն ևս բաղդաւորութիւն ունեցել էի տեսնել, այլ այն ժամանակ ի՛նչ յետ ընկած ողորմելի վիճակի մէջ էր, աւելորդ կը ճանչնամ ասելը, իսկ այժմ բոլորովին բարեփոխուած գտայ, և ուշադրութեան արժանին այն էր, որ տղայոց ռուսերէն լեզուի դասատուն մի հայ օրիորդ էր և շատ դիւրահասկանալի կերպով աշխատում էր համբակներուն աւանդել դասը:

Անտի գնացի Նորաբաց օրիորդական դպրոցը, այն ևս կարող եմ ասել, որ շատ բարեկարգ վիճակի մէջ տեսայ:

Արդարև ես տեսնելով այսպիսի ուրախական երևոյթ այդ փոքր հասարակութեան մէջ, որք չը նայելով ժամանակին նեղ միջոցներուն և բաւականին ծանր ծախքերով կը կառավարեն կանոնաւոր կերպով իւրեանց երկսեռ դպրոցները: Ստիպուեցայ դիմել ձեր յարգութեան խնդրելով, որ բարեհաճիք այս երկտողս հրատարակել պատուական «Մեղու»-ի մէջ ի քաջալերութիւն նոցա և ի գիտութիւն մերայնոց:

Ե. Գալստեանց.

1883 թ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ.

Կ. Պոլսից եկած վերջին լուրերին նայելով յոյների ազդեցիկ շրջաններում յոյս ունին, որ Բ. Դրան և յոյն ընդհանրական պատրիարքի մէջ ծագած տարաձայնութիւնք յաջող վերջաւորութիւն կ'առնեն: Սպասում են, որ լորդ Դիւֆֆէրինի և այլ դեսպանների միջնորդութիւնքը չեն մնալ առանց հետեւանքի: Ամերիկայի դեսպան գէնէրալ Ուօլէսը առանձին հրաւիրմամբ արաւ երկրորդ տեսակցութիւնը սուլթանի հետ և նա օգուտ քաղելով այս դէպքից խնդրեց սուլթանից, որ սա պատրիարքի արտօնութիւնները չը խախտէ: Սուլթանը պատասխանեց, որ այդ հարցն իրան պաշտօնապէս առաջարկած չէ և ինքը կը քննէ այն չափաւորութեան և արդարութեան ոգով: Հայոց կրօնական ժողովը մշակել է երկար առաջարկութիւն եկեղեցւոյ արտօնութեանց մասին, Ներսէսը հաւանութիւն է տուել նրան և նա կը ներկայացնէ Բ. Դրան:

— «Times» լրագիրը խօսելով Բ. Դրան և ընդհանրական յոյն պատրիարքի մէջ եղած տարաձայնութեան վրայ ասում է.՝«Անտարակոյս շատ դժուար է հասկանալ թէ տաճիկ նախարարներն ինչով գեկավարվեցան ներկայումս այսպիսի ծանր և դրգռիչ խնդիրներ յարուցանելիս: Եւրոպայում չը կայ մի ազգութիւն, որ հիմնաւոր յարաբերութիւնքը եկեղեցւոյ և կառավարութեան ջնջելու անակնկալ և անտեղի փորձը, ինչպէս այդ լինում է այժմ տաճկաստանում, առաջ չը բերէր ծանր դժուարութիւնք: Այս Տաճկաստանում աւելի ծանր է, որովհետև աշխարհիկ իշխանութիւնը մահմէդականների ձեռքումն է. իսկ եկեղեցական իշխանութիւնը օրթոդոքս քրիստոնեայ է: Բացի սրանից Դրան ոչ միայն ըստ ինքեան հակառակ է առողջմիտ քաղաքականութեան, այլ և Բէռլինի դաշնադրութեան եթէ ոչ տառի, գէթ նորա կարգադրութեանց ոգւոյն: Այս դաշնադրութեան 62 յօդուածով ամեն դաւանութեանց տրված է ազատութիւն իրանց աստուածապաշտական ծէսերը կատարելու, ինչպէս և նրանց չէ արգելվում կազմակերպելու իրանց եկեղեցական վարչութիւն և իրենց յարաբերութիւնքը որոշելու եկեղեցական իշխանութեանց մէջ: Իրաւ է, որ Բ. Դուռը, Բէռլինի դաշնադրութեանց յետ փորձեց մի քանի անգամ բարենորոգմունք անելու և դատաստանական բարենորոգութիւնն էլ, որ առաջարկից տարաձայնութիւնք Դրան և պատրիարքի մէջ, դուցէ տաճկական հայեցակէտից, համարվում է իւրև մինը բարձր Դրան յանձն առած պարտաւորութիւններից նոյն Բէռլինի դաշնադրութեամբ, բայց և այն պարզ է, որ մեծ տէրութիւնք դիտաւորութիւն չունէին ստիպել Տաճկաստանը այնպիսի բարենորոգութիւն անելու, որ առիթ է դառնում յոյն եկեղեցւոյ հին աւանդական իրաւանց խախտման:

Մնում է յուսալ, որ այդ յոյժ չարաբաստիկ և անտեղի վէճը ընդհանրական պատրիարքի հետ շուտով կարգի կը դնվի status quo-ի հիման վերայ: Դրան շահ չէ երկարացնել վէճը, որ կարող է գրգռել նորա դէմ բոլոր քրիստոնեից հակակրութիւնը: Դժուար է կարծել թէ տաճիկ նախարարները մոռացած լինեն այն դերը, որ խաղաց կրօնական զգացմունքը դժգոհութիւն յարուցանելու համար բոլոր Եւրոպայի մէջ այն խռովութեանց համար, որ տաճիկները գործում էին Բուլղարիայում: Նրանց անյայտ չէ, որ 1877 թուականի պատերազմի ժամանակ Ռուսաց քաղաքականութեան հիմն էր Ռուս ազգի խորին կարեկցութիւնը դէպի տաճկահպատակ տառապեալ քրիստոնեաները: Շատ հեշտ է այժմըս էլ գրգռել այդ զգացմունքը, բայց շատ դժուար է հասկանալ թէ դրանից ինչ շահվելու յոյս ունի Տաճկաստանը: Մինչև յայժմ դեռ ևս տարաձայնութիւնք Դրան և պատրիարքի մէջ տեղական եկեղեցական խնդիր է երեւում, բայց շուտով ամեն բան, նա կարող է մեծ քաղաքական նշանակութիւն ստանալ և այն ժամանակ ծանր միջազգային խնդրի կերպարանք կ'ունենայ: Եթէ տաճիկ կառավարութիւնը չունի ցանկութիւն, իւր սեփականութեամբ վերջ տալու տարաձայնութեան, պէտք է կարծել, որ եւրոպական մեծ տէրութիւնք, Բէռլինի դաշնադրութեան զօրութեամբ, գործ կը դնեն իրանց բոլոր ազդեցութիւնը Դրան վերայ այդ ցանկալի նպատակին հասնելու համար:

— Բէռլինից «Հաւասի գործակալութեան» գրում են յունուարի 2-ից: Պետերբուրգում, Բէռլինում, Հռոմում և Մադրիդում վերջին ժամանակներս տեղի ունեցած քաղաքական յանցանքների պատճառաւ, յանցաւորների ապաստանարան դառնալու հարցը վերջին տարիներս մի քանի անգամ բարձրացաւ Զուիցցարիան — Բեռնի թղթակցի խօսքերով, յանախ ապաստանարան է դառնում այդպիսի յանցաւորներին, և քաղաքական յանցանքների վերայ նայում է իրրև ոչ քրէական յանցանքների վերայ: Գերմանիայում այդ հարցը զբաղեց բոլոր ուսումնականների ուշադրութիւնը, սկսած համալսարանների պրոֆեսօրներից մինչև կայսրութեան իրաւաբանական խորհրդականը: Նորա փորձ փորձեցին որոշել սահման դնել այդ իրաւունքներին, այն հիման վերայ, որ ազգերը այդ իրաւունքների հետ ունին նաև իրենց պարտաւորութիւնները: Այն այդ մոտով Լայպցիգի համալսարանի պրոֆեսօրը քննում էր վերոյիշեալ հարցը իւր ունկնդիրների առաջ: Պրոֆեսօրը խօսում էր այն միջոցների վերայ, որոնք կարող են եւրոպական պետութիւնները գործ դնել Անգլիայի և Զուիցցերիայի դէմ ստիպելու համար այդ պետութիւնները, որ համաձայնեն սահմանափակելու իրանց իրաւունքները: Բէռնի թղթակիցն այնուհետև հաղորդում է, որ Լայպցիգի համալսարանի մէջ ուսանողների — զուիցցերիացի տարր վրդովեցաւ այն ասութիւնից. — Նոքա վճռեցին դիմել Բէռլինի Զուիցցերական ներկայացուցչին բացատրութիւն խնդրելու համար, սակայն ներկայացուցիչը չուզեց նոցա հանդիպել, յայտնելով, որ պրոֆեսօրի առածները իւր անձնական կարծիքն է, որ ոչինչ յարաբերութիւն չ'ունի պետութեան հետ: Չը նայելով այս պատասխանին, այնուամենայնիւ Բէռլինի Զուիցցերական ներկայացուցիչը յայտնեց վերոյիշեալ անցքը դաշնակցական խորհրդին, որն բոլորովին համաձայնութիւն ցոյց տուեց նորա պատասխանին:

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

Բժշկապետ Գ. Գ. Տէր-Գրիգորեանցը վերադարձել է արտասահմանից և ընդունում է հիւանդներին կանանց, ներքին և կոկորդի հիւանդութիւններով. Սերգէեվսկայա, տ. Շահպարոնեանցի:

⁂

Ամսոյս 22-ին, կիրակի, ս. Նշան եկեղեցւոյ ծխականք և ժամաւորք հրաւիրվում են, ս. պատարագից յետ, նոյն եկեղեցւոյ բակի դպրոցի շինուածքը, երեսփոխան ընտրելու համար, որոյ անհրաժեշտութիւնը շատ զգալի է:

⁂

Այսօր, ամսոյս 19-ին, հայ դերասանական խումբը կարգադրութեամբ պ. Գ. Ջմշկեանի տալիս է հայերէն ներկայացումն մասնակցութեամբ տ. Ալմայի և պ. Սաֆրազեանի կը ներկայացնեն 1) Լիսի Գիլէլ, դրամա 3 արարծ., 2) Ընտանեկան փոթորիկ, վոդ. մի արարծ. և 3) Կենդանի պատկերներ 4 փոփոխութեամբ «Փրկիչ Քրիստոնէից» և պ. Աղայեանցն ու Սաֆրազեանցը կը կարդան բանաստեղծութիւնք: Տեղերի գինը սովորական է: Սկիզբն է 7½ ժամին:

⁂

✱ Տեղական հայ թատրոնի գործիչ դերասանուհիներից մէկը ևս իջնում է այսօր գերեզման չորս տարվայ մէջ մաշուելով ծանր մաշող թոքախտ հիւանդութիւնից: Դա երեկեան օր. Սանդուխտն է, շնորհալի կոմիկ դերասանուհին, որ առաջին իսկ դեբիւտից յետոյ իւր 16 տարեկան հասակում փոխարինեց հանգուցեալ հաղուադիւտ կոմիկ դերասանուհի Քէթեան Արամեանցին: Առաջին անգամ, 1772 թ., բեմ դուրս գալուց յետոյ, հանգուցեալը միւս տարուայ ընթացքում ամուսնացաւ մէկ երկրորդ դերձակի հետ Անիեանց ազգանունով, որից ունեցաւ մէկ տղայ: Ամուսնական կեանքում նա ստացաւ թոքախտ հիւանդութիւնը, որը այսօր իջեցնում է նորան գերեզման: Հանգիստ հողդ, խեղճ մշակ խղճուկ հայկական թատրոնի: Հանգուցեալի կատարած գլխաւոր դերերն են՝ Մարգիզուհի (Դոն-Սեզարի մէջ), Բանաստեղծուհի (Սէր և նախապաշարմունքի մէջ), Խամփերի, Շուշան և այլն ծեր կանանց դերեր պ. Սունդուկեանցի պիէսներում:

⁂

«Нов. Обозрение» լրագիրը, առաջնորդող յօդուած է նուիրած իւր № 10-ում քրիստոնէութեան վերականգնման ընկերութեան» Կովկասում, որ 1860 թուականից գոյութիւն ունի: Ինչպէս երևում է Սրբազան Սինոդի պրոկուրորի հաշուից, որ հրատարակած էր «Прав. Вѣст.»-ում, ընկերութեան ծախքը 1860—1882 թ. այսինքն 22 տարվան ընթացքում եղել է 3,336,987 ռ. 90 կոպ., կամ 161,544 ռ. 90 կ. իւրաքանչիւր տարին: 1881 թ. Կովկասի 2 միլիոն մահմէդականներից քրիստոնէութիւն ընդունած են միայն 80 հոգի, որ կարող էր և՛ պատահական լինել:

ընկերութիւնը ծախսել է 669,142 ռ. 66 կօպ. դպրոցների համար և 155,847 ռ. 8 կ. Թոշակաւորների վերայ։ Այս ծախուց հետեանքի և արդեաց վերայ Անդրկովկասում տեղեկութիւնք չը կան։ Եկեղեցականներին ռոճիկ տրված է 1,201,292 ռ. 8 կ., իսկ ո՞յք և ո՞ր հիման վերայ ստացել են այս գումարը նոյնպէս տեղեկութիւնք չը կան։

Եկեղեցեաց շինութեան վերայ ծախսված է 211,697 ռ. 10 կ.։ Քանի եկեղեցի և ուր շինված են նոքա. սինօդի պրօկուրօրին յայտնի չէ, նոյնպէս տեղւոյս բնակչաց։

⁂

Մասնաւոր բարեգործութիւնն երիտասարդաց կրթութեան համար Ռուսաստանում բաւական մեծ է այժմ։ Համալսարանների աղքատ ուսանողներին Թոշակ տալու համար մասնաւոր նուէրներից կազմվել են գումարներ, որոնց շահերը գործ են դնվում յօգուտ չքաւոր ուսանողների։ Այնպիսի գումար Ս. Պետերբուրգի համալսարանն ունի 279,050 ռ., որոյ շահն է 17,696. Մօսկվայի համալսարանը ունի 770,580 ռ., որոյ շահըն է 53,834. Ս. Վլադիմիրի համալսարանն ունի 675,021 ռուբլի, տոկոսիքն են 32,905 ռ. Խարկովի համալսարանն ունի 282,197 ռուբլի 15,870 ռ. տոկոսով, Ղազանի համալսարանն ունի 177,726 ռ. 9,854 ռուբլի տոկոսիքով, Դօրպատի համալսարանն ունի 69,060 ռ. 3,323 ռ. տոկոսով. Վարշավայի համալսարանն ունի 2,400 ռ. Կուեավի կալուածքից, որ ընծայել է Մլոցկին։ Այսպէս առաջիկայ 1884-ի համար գումարն է 2,425,884 ռ., որոյ տոկոսն է 144,576 ռուբլի։

⁂

ՍՏԱՒՐՕՊՕԼԻՑ պ. Գ. Ե. Եագոյեանցը գրում է.—Իվան Մօրին անուամբ մի նպարավաճառ իր ընտանիքով ամսոյս 7-ի երեկոյեան ընթրիք էր անում, յանկարծ տասն օրվայ վարձված ծառան ներս է մտնում և ասում. տէր, կարծեմ մառանում մարդ կայ, տան տէրը այս լսելով վեր է կենում և ծառայի հետ դուրս գնում. իսկ ծառան արդէն պատրաստ լինելով իր չար դիտաւորութեան մէջ, տիրոջ գլխին հինգ կրվանքանոց կշռաքարով մի ուժեղ հարուած է տալիս, որով խեղճը ցնորուելով ընկնում է գետին, իսկ ծառան կրկնում է հարուածները կողքերուն և տիրոջ մեռցնում։

Տան տիկինը տեսնելով իր մարդու ուշանալը, աղախնոյն ուղարկում է տեսնելու թէ ինչ է անում. երբ վերջինս տան շէմքից դուրս է գալիս, ծառան մի քանի հարուածով նրան ևս մեռցնում է. նոյնպէս անցասենեակում մեռցնում է տան տիկնոջ։ Այս ամենից յետոյ անխիղճ չարագործը մտնում է սենեակ, որտեղ ընթրում էին խեղճ զոհերը, տեսնելով տան տիրոջ երեք տղայոց՝ 3—11 տարեկան, նրանց ևս նոյնպէս մեռցնում է։

Իսկ աւազակը տիրոջ հագուստը հագնելով, նրա ձին, մի սահնակ ապրանքով առած և փախած էր։

Աւազակն այսօր, 11-ին ամսոյս, բռնեցին, նա ասում է, իբր թէ ինքն միայն տան տիրոջ և կնոջ դուրս կանչել և մեռուցել է իսկ միւսներին ընկերներն են մեռուցել։

Զոհերին այսօր փառաւոր կերպով թաղում են։ Ռուսաց եպիսկոպոսը պատարագ մատոյց հանգուցելոց հոգւոց հանգստեանը համար և պատարագից յետոյ յարմար դամբանական խօսեցաւ։ Ահագին բազմութիւն, ամեն դասակարգից, յուղարկաւորութեան մասնակցեցաւ։ Վեց դագաղ տանում են հոգեւորականութեան առեւից։ Գերեզմանատան մէջ նուագարանը հնչեց թաղման տխուր եղանակը և խեղճ զոհերին թաղեցին մի գերեզմանի մէջ, երկու-երկու մէկմէկի վրայ դնելով։

⁂

Դզլարից գրում են, որ երկու ուսուցիչք աքսորվել են դպրոցից իրանց անվայել վարմունքի համար։ Նախ իրան հայհոյել են աշակերտաց առաջ, ապա բուռն ոյժ են գործ դրել միմեանց դէմ խորհրդարանում։ Սոցանից մէկն է, որ երբեմն զարդարում էր «Մշակի» էջերն իւր թղթակցութիւններով և մանկավարժական խրատներ կարդում ուրիշներին։

⁂

ՄՕԶԴՕԿԻՑ պ. Նորայրը գրում է ցաւելով որ մի նորատի տիրացու Շ. իրան շատ անվայել կերպով է պահում, և չը նայելով իւր խոստման շարունակում է զեղխ և չուայլ կեանք, մասնակցելով երիտասարդաց այնպիսի զուարճութեանց, որ մի եկեղեցականի չի վայելիլ։ Իսկ նորա քահանայ ծնողն էլ անփոյթ է իւր որդուն խրատելում։

⁂

Ղփչաղից պ. Ս. Բ. գրում է, որ Ջըբօրհնեաց երեկոյեան քահանայն յանդիմանում է ժողովրդեան, որ առաւօտեան հանդիսին ներկայ չէ լինում, խոյս տալով նախնեաց նուիրաբաշխութիւնից, որ մի կամաւոր նուէր է։ Այս միջոցին պատուաւոր գիւղացիներից մէկն իւր որդւոց հետ միասին ընդմիջում են քահանայի քարոզն և աղմուկ ու շփոթ գցում եկեղեցում, չը նայելով քահանայի յորդորանաց, տաճարի խաղաղութիւնը չը վրդովել։ Առհասարակ կարգապահութիւնը մեր եկեղեցիներում շատ թոյլ է։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Անցեալ տարի բողոքական գերմանական աշխարհը մեծ հանդիսով տօնեց ամեն տեղ Լուտէրի ծննդեան չորսհարիւր ամեակը. դեռ այս հանդէսի տպաւորութիւնը չը ջնջված բողոքական Շվէյցարիան էլ տօնեց իւր կրօնական յեղափոխչի՝ Ուլրիխ Ցվինգլիի չորս հարիւրամեակըն։ Սա ևս յեղափոխական 16 երրորդ դարի մեծ մարդիկներից մէկն էր, որոնք մտքի և խղճի ազատութիւն քարոզեցին, որ և դարձաւ հիմն Եւրօպայի ներկայ յառաջադիմութեան։ Ցվինգլին իւր հայեցակէտով կեանքի վերայ աւելի բարձր էր Լուտէրից, նա մտքի և խղճի ազատութեան հետ կապում էր և մարդուս քաղաքական ազատութիւնը, իբրև նոցա բնական հետեանք։

⁂

Մօտ օրերս Բեռնի շրջակայքում փորձ եղաւ մի նոր զէնքի գործադրութեան։ Շասպօի հրացանը հրաշք էր գործում և Վիկտոր Հիւգօն ասում էր նորա համար, թէ այդ զէնքով մի րոպէում կարող 12 հոգի սպանել. բայց դա խաղալիկ է համեմատելով միտրալեօզի հետ, որոյ վերայ փորձ եղաւ Բեռնում։ Զինւորներին, որոնք գիտեն նրան գործ դնել և նրան արձակելու փորձառու են, կարող են նրան արձակել անընդհատաբար։ Երեքհարիւր մետր հեռաւորութեան վերայ (որը միջապատ էր) մի րոպէում 250 անգամ արձակվեցաւ։

⁂

Նշանաւոր ընտանիք։— Ցիրստենասում (Աւստրիա) բնակվում էր մի գիւղացի, որ երեք անգամ ամուսնացած էր։ Նորա երեք կանայքն էլ այրիներ էին, հարազատ քոյրեր և ունէին զաւակներ իրանց առաջին ամուսնութիւնից։ Իւրաքանչիւր կնոջից գիւղացին ունեցաւ զաւակներ, ուստի և զարմանալի չէ, որ նա ունէր 27 թէ հարազատ և թէ խորթ զաւակ, վեց զանազան ամուսնութիւններից։ Չը նայելով զաւակների այն բազմութեան աշխատասէր գերմանացին կարողացաւ իւր զաւակաց մեծ մասին լաւ ապահով դրութեան հասցնել և թոյլ չը տուեց, որ մէկը նրանցից կարօտութիւն զգայ անհրաժեշտ պիտոյից մէջ։

⁂

Մեծահոգի վարմունք։—Մի երգեհոն ածող երկար ժամանակ ածում էր մի մեծ պանդոկի դրանը, ուր բազմաթիւ այցելուներ կային, բայց ոչ մէկը սրանցից չը մտածեց քաղցած և տանջված երաժշտին մի գրօշ ընծայելու։ Այն ժամանակ մի մեծ գինեվաճառ ընկերութեան գործակատար պ. Կ. մերձենալով երաժշտին, երգեհոնի վերայ ածած վալսի եղանակով գեղեցիկ ձայնով երգեց մի արիա, նորա շուրջը հաւաքվեցաւ մեծ բազմութիւն ունկնդիրների և նա երգը վերջացնելուց յետ ժողովեց և յանձնեց երաժշտին 18 ռուբլի։

⁂

Չինացի էսկուլապներ։—Բժիշկ Վիստէր հաղորդում է հետաքրքիր բան Չինաստանի բժշկութեան մասին։ Միայն բժշկութիւն, ինչպէս գիտութիւն, երկնային Թագաւորութեան մէջ չը կայ, որովհետև չինացի բժիշկները չ'ունին ամենևին հասկացողութիւն անատօմիայի և ֆիզիօլօգիայի մասին։ Հիւանդի մօտ կանչուած բժիշկը, իսկոյն պիտի ճանաչի ցաւը, ապա թէ ոչ կը կորչի նորա համբաւը։ Բացի սորանից նա անպատճառ պէտք է ունենայ ակնոցներ, որովհետև անակնոց մարդը չէ համարվում ուսեալ. Երբ որ հիւանդը պատմում է իւր տանջանքը, բժիշկն իսկոյն ցոյց է տալիս այնտեղն, որտեղ բուն է դրել հիւանդութիւնը, և ինչպէս վերջնական ստուգութիւն շօշափում է երկու ձեռքի բազկերակը, որից երևում է ամեն անգամ որ հիւանդ կողմի բազկերակը շատ փոխուած է. ոչ մի բժիշկ Չինաստանումը չի սկսիլ հետազօտել հիւանդին, մինչև չ'ստանայ փող։

Խմբագիր Պ. ՍԻՄԷՕՆԵԱՆՑ.
Հրատարակիչ Հ. ԷՆՖԻԱՃԵԱՆՑ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

«ՄԱՆԿԱՒԱՐԺԱՆՈՑ»

Ամսագիրը կհրատարակվի 1884 թ. յունվարից, գլխաւորապէս մանկավարժական ուղղութեամբ, ամսական տետրը 2 երկու թերթից, տարին 10 տետր: Տարեկան գինը երեք մանէթ:

Հրաւիրվում են մասնաւոր, դպրոցասէր Հայոց ուսուցիչներ աջակցելու Մանկավարժանոցին բաժանորդագրութեամբ, և աշխատակցութեամբ: Մինչև յունվար ստորագրվողներին յունվարի մէկին կուղարկվին դպրոցական պրօգրամներս: Ստորագրվողներն յատկապէս պիտի գրեն Эчміадзинъ Редакція Манкаваржаноцъ.

Խմբագրող-հրատարակող՝
Խորէն Ծ. վարդ. Ստեփանէ.

ВЪ КАНЦЕЛЯРІИ ВОЕННАГО ГУБЕРНАТОРА КАРССКОЙ ОБЛАСТИ

ОТКРЫТА ПОДПИСКА

НА ГАЗЕТУ

„КАРСЪ“

НА 1884 ГОДЪ.

Газетъ „КАРСЪ“ въ 1884 года бугетъ издаваться совершенно на тѣхъ-же основаніяхъ какъ и въ прошломъ году, по той-же программѣ и подъ тою-же редакціею.

Условія подписки: съ доставкою и пересылкою въ годъ *три рубля*, за четыре мѣсяца *одинъ рубль* Подписка принимается *въ Канцеляріи Военаго Губернатора*, куда адресуютъ свои требованія и иногородные.

Отъ Редакціи. Назета „КАРСЪ“ нмѣтъ ближайшею цѣлью всестороннее изученіе новопріобрѣтенной Области и распространеніе въ обществѣ вѣрныхъ и точныхъ свѣдѣній, какъ о нынѣшнемъ ея состояніи, такъ и о мѣропріятіяхъ, направленныхъ къ ея развитію и благоустройству. Цѣль эта можетъ быть достигнута въ той мѣрѣ, въ какой лица, имѣющія по своему положенію возможность собирать свѣдѣнія по тѣмъ или гругимъ вопросамъ, касающимся Области, ея населенія и расположенныхъ въ ея предѣлахъ частей войскъ, выразятъ свое сочувствіе газѣтѣ и пожелаютъ оказать ея редакціи просвѣщенное свое содѣйствіе сообщеніемъ имѣющихся въ ихъ рукахъ свѣдѣній и матеріаловъ; поэтому мы просымъ этихъ лицъ не отказать намъ въ своемъ участіи и поспѣшить приведеніемъ въ порядокъ и сообщеніемъ редакціи находящихся у нихъ материаловъ; самая разработка этихъ матеріаловъ можетъ быть сдѣлана и въ редакціи, а потому литературные недостатки ихъ ни малѣйшимь образомъ не должны стѣснять авторовъ ожидаемыхъ сообщеній.

СЪ 1-ГО ЯНВАРЯ 1884 ГОДА

ВЪ ТИФЛИСѢ ИЗДАТСЯ

НОВАЯ ЕЖЕДНЕВНАЯ (350 НУМЕРОВЪ ВЪ ГОДЪ) ЛИТЕРАТУРНО-ПОЛИТИЧЕСКАЯ ГАЗЕТА

„НОВОЕ ОБОЗРѢНІЕ“

подъ редакціею А В. СТЕПАНОВА (бывш редакторъ „Юридическаго Обозрѣнія“).

Объемъ газеты—печатный листъ средняго формата; программа—общая всѣмъ литературно-политическимъ ежедневнымъ изданіямъ.

Подписная цѣна съ пересыккою и доставкою: на годъ **10** руб.; на **6** мѣс.—**6** р.; на **3** мѣс.—**3** р. **50** к; на **1** мѣс.—**1** р. **50** к

Подписка (городская и иногородская) и объявленія (по 5 коп. за **строку петита**) принимаются **въ Тифлисѣ** исключительно **въ Газетномъ Агентствѣ В. Шавердова; въ С.-Петербургѣ-жѣ и Москвѣ**—въ книжныхъ магазинахъ «**Новаго Времени**».

Временное (до 15-го декабря) помещеніе редакціи: Давидовская ул. д. Кананова, квартира редактора.

За газетой обезпечено **постоянное сотрудничество: кн. К. А. Бебутова, Вс. М. Гаршина, П. А. Измайлова, С. Н. Кривенко, Н. Я Николадзе, П. А Опочинина, А. Н. Плещеева. И. Ф. Тхоржевскаго, Гл. И. Успенскаго. Н. А. Шаврова.**

ԾԽԱԽՈՏԻ ԳՈՐԾԱՐԱՆԱՏԷՐ Ն. ԿՈՂԱՑՈՍԻ ԲՈԶԱՐՃԵԱՆՑ ԹԻՖԼԻՍՈՒՄ.



Համաձայն իմ յայտարարութեանս ի 2-էն սեպտեմբերի 1883 ամի իմ գործարանի ծխախոտի ապրանաց փաթեթների յաճախակի կեղծումն աչքի առաջ ունենալով մի քանի գործարանատէրերի կողմից, այստեղ դնում եմ նկարն այն փաթեթի, որոյ մէջ կը դրվին իմ պապիրօսներիս իւրաքանչիւր տասնեակը, իսկ միւս ծխախոտային ապրանաց փաթեթները [illegible] դուրս կը գան նոյն նկարով։

Ցայտնելով այս մասին յարգոյ հասարակութեան, միանգամայն իմ յաճախորդներին խնդրում եմ, որ իմ գործարանի ապրանք համարեն միայն այն, ինչ որ վերոյիշեալ նկարով փաթեթների մէջ են զետեղված։



ДОЗВОЛЕННО ЦЕНЗУРОЮ ТИФЛИСЪ, 18-го Января 1884 г. Типограф. М. Рот. и К-о. На Гол. проспектѣ Домъ № 41.
Տպարան Մ. Ռօտինեանց և ընկ.